ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/140

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.06.2020թ. թիվ 26/26/9778-2020 գրությամբ «Ավտոշինա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատախազության 29.06.2020թ. թիվ 44/10/16329-2020 գրության հիման վրա, 30.06.2020թ. թիվ 26/26/9778-2020 գրությամբ նախաձեռնել է «Ավտոշինա» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Ավտոշինա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Ավտոշինա» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 02.07.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««Ավտոշինա» ՍՊԸ-ն ստեղծվել է 2014 թ. և զբաղվում է բացառապես անվադողերի ներմուծմամբ և վաճառքով: Գործունեությունը սկսելու օրվանից մինչ օրս մեր կողից կայացվել է որոշում ըկերության գործունեության քաղաքականության վերաբերյալ, այն է՝ աշխատել ազնիվ, անվերապահ կատարել օրենսդրությամբ սահմանված կարգով մեր պարտավորությունները պետության նկատմամբ և ասվածի ապացույցը հանդիսացել է այն, որ «Ավտոշինա» ՍՊԸ ստեղծման օրվանից հաշվառվել է խոշոր հարկ վճարողների ՀՏ-ում և համապատասխանաբար վճարել հարկերը բարեխիղճ ձևով:

Մեր կողմից սույն թվականի հունիսի 16-ին «Ավտոշինա» ՍՊԸ-ի գործունեության պատմության մեջ առաջին անգամ կայացրել ենք որշում մասնակցել ՀՀ դատախազության կողմից «ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/6» ծածկագրով անցկացվող գնման մրցույթին և համապատասխանաբար ներկայացրել ենք գնային առաջարկ ներառելով շահութաբերության մինիմալ տոկոսադրույք, որում սակայն թյուրիմացաբար ապրանքատեսականու ընդհանուր թվաքանակի գնի արժեքի փոխարեն ներկայացրել ենք 1(մեկ) հատի գնի արժեքը, կից կներկայացնենք համապատասխան փաստաթղթի պատճենը, որպեսզի ասվածը լինի լիարժեք պատկերացնելի, բայց ահա մեր գործընկերները ՀՀ Գլխավոր Դատախազությունից, ենթադրում եմ որոշել են, որ գնային առաջարկի սխալը տեղի է ունեցել միտումնավոր և չարամտորեն ի վնաս մեզ, այլապես չեմ հասկանում, որ թյուրիմացաբար և ակամայից կատարված սխալի ուղղման համար չէր տրվի լրացուցիչ հնարավորություն, երբ արժեքի գումարի սխալը ակնհայտ է, և որ ամենակարևորը՝ կարժանանար այսպիսի խիստ եզրահանգման:

Հարգելի պարոն Ներսիսյան, այսքան հանգամանալից ներկայացնելով տեղի ունեցած սխալմունքը, ակնկալում ենք օբյեկտիվ մոտեցում և ապագայում նոր մասնակցություններ պետության կարիքների համար նախատեսված գնման գործընթացներում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/140 ընթացակարգի շրջանակներում 08.07.2020թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ դատախազության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ դատախազությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 29.06.2020թ. թիվ 44/10/16329-2020 գրությամբ հայտնել է, որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 45-րդ կետի՝ ներկայացնում է «Ավտոշինա» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/140 ընթացակարգի շրջանակներում 08.07.2020թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/140 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/140 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ դատախազության կողմից իր կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ավտոշինա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.06.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ավտոշինա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար:

3. ՀՀ դատախազությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի

(հետայսու նաև՝ Կարգ) 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով՝ լիազոր մարմնին ներկայացրել է 29.06.2020թ. թիվ 44/10/16329-2020 գրությամբ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.06.2020թ. թիվ 26/26/9778-2020 գրությունը, ՀՀ դատախազության 29.06.2020թ. թիվ 44/10/16329-2020 գրությունը, ինչպես նաև «Ավտոշինա» ՍՊԸ-ի 02.07.2020թ. գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ

հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպես՝ ՀՀ դատախազության կողմից իր կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ավտոշինա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.06.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ավտոշինա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերն Ընկերության տնօրենի փոխարեն ստորագրված են Ն. Ավոյանի կողմից, սակայն բացակայում է լիազորագիրը, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացրած հայտում 3-րդ չափաբաժնով առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագրում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ 3-րդ չափաբաժնում ներկայացված ապրանքի բեռնվածության ինդեքսը ավելի ցածր է հրավերով պահանջվող բեռնվածության ինդեքսից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել հայտերի բացման և գնահատման նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ հնարավորություն տալով Ընկերությանը մինչև 18.06.2020թ. ժամը 12:00-ն շտկել նշված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.06.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ավտոշինա» ՍՊԸ-ն սահմնաված ժամկետում չի ներկայացրել շտկված փաստաթղթերը և վերջինիս կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար:

<u>ՀՀ դատախազությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով՝ լիազոր մարմնին ներկայացրել է 29.06.2020թ. թիվ 44/10/16329-2020 գրությամբ:</u>

Վերը նշված փաստերով պայմանավորված և հիմք ընդունելով «ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.06.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությունը՝ Ընկերության հայտի մերժման վերաբերյալ՝ արձանագրում եմ, որ «Ավտոշինա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 18.06.2020թ., սակայն Պատվիրատուն Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին 29.06.2020թ., որի պայմաններում Պատվիրատուի կողմից խախտվել է Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը (այդ թվում՝ մասնակցի տվյալները) լիազորված մարմին ներկայացնելու Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետը:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ

կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և գործողությունների ժամանակին իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում՝ Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ, որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի

շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայումս գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Վերոգրյալ իրավական նորմերի մեկնաբանության և սույն գործի փաստական հանգամանքների համադրման արդյունքում արձանագրում եմ, որ տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետով սահմանված իմպերատիվ դրույթը՝ այն է հինգ աշխատանքային օր ժամկետը: Ընդ որում՝ օրենսդրությունը չի նախատեսում նշված ժամկետը վերականգնելու ինստիտուտը, հետևաբար, տվյալ դեպքում հինգ աշխատանքային օր ժամկետի խախտման հանգամանքները չեն դիտարկվում:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Ավտոշինա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.06.2020թ. թիվ 26/26/9778-2020 գրությամբ «Ավտոշինա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**